Գեորգի Մարտիրոսյան
ԿԸՀ անդամ

Ծնվել է 1972թ. մայիսի 23-ին Երևանում:
1989թ. ավարտել է Երևանի թիվ 71 միջնակարգ դպրոցը:
1999 – 2003թթ.՝ ՌԴ, Սանկտ Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի, տնտեսագիտության եւ իրավունքի ինստիտուտ, իրավագիտության ֆակուլտետ, մասնագետ:
1998 – 2000թթ. ՝ ՌԴ, Սանկտ Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի, տնտեսագիտության եւ իրավունքի ինստիտուտ, կառավարման ֆակուլտետ, բակալավր:
1989–1995թթ.՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, պատմության եւ իրավագիտության ֆակուլտետ, մասնագետ:
1992 – 1994թթ. աշխատել է «Ղարիբյան» ՍՊԸ-ում որպես իրավաբան:
1996 -1998թթ.՝ «Կահույք» ՍՊԸ-ում, իրավաբան:
1998 – 2001թթ. եղել է «ԷԼԳԱ» ՍՊԸ-ի հիմնադիր-տնօրեն:
2001 - 2004թթ.՝ «Կամարիս» տեղական ինքնակառավարման համայնքի ղեկավարի իրավախորհրդական:
2004 – 2007թթ.՝ «Կենտրոն» թաղային համայնք, իրավաբանական վարչություն գլխավոր մասնագետ:
2007 – 2009թթ. զբաղեցրել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարի խորհրդականի պաշտոնը:
2010թ. հունվար – ապրիլ՝ «Փաստաբան Առուստամյան» ՍՊԸ, իրավաբան:
2010 - 2011թթ. աշխատել է ՀՀ Սփյուռքի նախարարությունում որպես իրավաբանական բաժնի պետ:
2011թ. ապրիլ- հուլիս՝ «Իրավական եռանկյուն» ՍՊԸ, իրավաբան:
2000թ.-ից մինչ օրս Փաստաբանների պալատի անդամ է:
2007-2011թթ.՝ ՀՀ թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղար:
2011թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:
Ամուսնացած է, ունի 3 երեխա: